

մը կրեց իր ցեղային աւիչէն: Մեր պատմութեան մեծ կործանումները վնասած էին մեր թիւին, բայց անզօր մնացած մեր հոգիին վրայ: Ազատուող հայը տասնապատկուած ուժով մը ինքզինքը կը գամէր իր բոյնին ու կը դարմանէր թիւին պատգամը, մեր լեռներուն վրայ մնայուն ընելով մեր տեսակը: Իննսունվեցը պարտութիւնն է մեր հաւատքին: Մեր հոգին առաջին անգամ կը հարուածուէր մեր լեռներուն մէջ: Ու դարաւոր մեր գոյութեան միջնաբերդը, մեր բարձրաւանդակները ինկած էին թշնամիին հասողութեան: Անկէ յետոյ, մեր գեղերը անապահով չէին միայն իրենց ստացուածքէն, պատիւէն ու անձէն: Անոնք անապահով էին մա՛նաւանդ գալիքէն: Այսինքն՝ հունտին սպառնալիքէն: Մեր գեղերը, մա՛նաւանդ դաշտայինները «Աստուծոյ աջին յանձնուած» դժբախտութիւններ եղան: Անոնք, առնուած գաղթական թուրքերու օղակի մը մէջ, հետզհետէ դատապարտուեցան լռին պաշարումին ու իրենք զիրենք կերան ներսէն: Ոստիկանատունը, քարդերու նուէր, այդ գեղերուն մէջ դրաւ ալլասերման մեծ կեղը:

Լաւ կը յիշեմ, այդ օրերուն, լեռնէն դարձիս, մեր գեղէն Մենծ-Արօտ կոչուած տափաստանին մէջ հանդիպեցայ անսովոր բազմութեան: Սիրտս վկայեց.՝ ոճիր: Սօսիին տակ պառկած էին հայր մը, տասներկու տարւան տղան, քով քովի, իրարու վրայ կռթնելու ձեւով մը, քանի որ գնդակը ծակած էր զանոնք այդ դիրքին մէջ: Գեղացիներ, ձգած մեռելները, ցոյց կու տային բլուրին գագաթը, ուր երկու մարդոց ձեւերը կը հեռանային: Ոճրագործները: Զարմանալին սակայն չորս ոստիկանի ներկայութիւնն էր ամբոխին մէջ: Կը խօսէին, կը նայէին մեռնողներուն եւ ոչ ոքի մտքէն կ'անցնէր նետուիլ առաջ, կտրել հեռացողներուն ճամբան: Զարդէն առաջ, հարիւր հրացան առանց հրակէրի բռնած կ'ըլլային բլուրին կռնակէն, չարագործներէն շատ կանուխ: Տասնապետը, ալպանցի մը, ցեղակից մարդասպաններուն, քիչիկ մըն ալ ազատամիտ, թուրքերը ճիշդ դատելու չափ, կամա-